

ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝

22.02.2024 թ. կայացած նիստի թիվ 5 արձանագրություն

Օրակարգ

1. Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք. գ. թ. Մարիանա Սարգսյանին՝ թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավարության թույլտվություն տալու խնդրանքով ԿԳՄՍ նախարարության Գիտության կոմիտե դիմելու հարցը:
2. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ՝

Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք. գ. թ. Մարիանա Սարգսյանին՝ թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավարության թույլտվություն տալու խնդրանքով ԿԳՄՍ նախարարության Գիտության կոմիտե դիմելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ս. Գասպարյանը ներկայացրեց հարցը՝ նշելով, որ Ս. Սարգսյանը աշխատում է ամբիոնում 2007 թվականից և այս բոլոր տարիների ընթացքում դրսևորել է իրեն որպես բանիմաց ու պատասխանատու մասնագետ: 2017 թվականից ղեկավարում է այժմ ԵՊՀ հումանիտար հետազոտությունների ինստիտուտում գործող բրիտանական գրականության և լեզվամշակույթի գիտական խումբը: Ս. Սարգսյանը հեղինակ է 31 գիտական հրապարակումների, որոնցից 5-ն ընդգրկված են WOS և Scopus գիտատեղեկատվական շտեմարաններում, H-index-1: Արտահայտվեցին նաև ք. գ. դ., պրոֆեսորներ Գ. Մուրադյանը, Ա. Կնյազյանը՝ նշելով, որ Ս. Սարգսյանը լիովին կարող է ստանձնել թեկնածուական ատենախոսություններ ղեկավարելու պարտականությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Երաշխավորել Բ. Գ. Թ., դոցենտ Մարիանա Սարգսյանի թեկնածությունը թեկնածուական ատենախոսություններ ղեկավարելու համար և դիմել Գիտության կոմիտե այդ երաշխավորությունը հաստատելու համար: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի ղեկան և գիտխորհրդի նախագահ,



Բ. Գ. Թ., դոցենտ՝

Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, Բ. Գ. Թ., դոցենտ՝



Մ. Գ. Դալայան

22.02.2024 թ.